## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 մարտ 2016 թվականի N 08-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշեց.**

Հաստատել համայնքի ավագանու թիվ 03 հերթական նիստի օրակարգը:

1. «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/զեկ. Ս.Թ.Գրիգորյան

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12-Ն, 18.01.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2-Ա, 16.04.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 07-Ն, 30.06.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18-Ն, 19-Ն, 21-Ն և 22-Ն , 29.12.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37-Ա և 40-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/զեկ. Ս.Թ.Գրիգորյան

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՐԱՅՐ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

31 մարտ 2016 թվականի N 09 -Ն

## «ՕՐԻԵՆԹ ՍԹՈՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ կետի, հողի հարկի մասին օրենքի 5-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1746 –Ն որոշման 2-րդ կետի բ/ և ե/ ենթակետերի պահանջներով, ինչպես նաև առաջնորդվելով Ավշար համայնքի ավագանու 16 ապրիլի 2014 թվականի թիվ 03 արձանագրության թիվ 08-Ն որոշման արձանագրային մասի որոշ դրույթներով և հիմք ընդունելով ընկերության առաջարկը վարձավճարի վերաբերյալ՝ կայացրեց որոշում.

1. Ավշար համայնքի ավագանու 16 ապրիլի 2014 թվականի թիվ 03 արձանագրության թիվ 08-Ն որոշմամբ սահմանված վարձավճարի չափը՝ 20%-ը թողնել անփոփոխ:

2.«ՕրիենթՍթոն» ՍՊ ընկերության համար հանքարդյունահանության նպատակով տրամադրված տարածքի վարձավճար սահմանել 8.000.000 (ութ միլիոն) հհ դրամ, որը կազմում է արդյունաբերության և ընդերքօգտագործման նպատակային նշանակության հողատարածքի կադաստրային արժեքի 19.7531%-ը:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին «ՕրիենթՍթոն» ՍՊ ընկերության հետ կնքելու համաձայնագիր, հողի վարձակալության պայմանագրի /կնքված 29.01.2003 թվականին/ մեջ փոփոխություն կատարելու մասին :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ՋԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտ 2016 թվականի N 10 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2012 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 12-Ն, 18.01.2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2-Ա, 16.04.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 07-Ն, 30.06.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18-Ն, 19-Ն, 21-Ն և 22-Ն , 29.12.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37-Ա և 40-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի , «Իրավական ակտերի մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Տարածքային Կառավարման և Արտակարգ իրավիճակների նախարարի մի շարք հրամաններում փոփոխություններ կատարելու մասին 09.02.2016 թվականի թիվ 96-Ա հրամանի պահանջներով՝ կայացրեց որոշում .

Համայնքի ավագանու ՝

14.11.2012 թվականի «Համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին թիվ 12-Ն որոշման հավելվածում .

18.01.2013 թվականի «Ավշար համայնքի զարգացման 2013-2017 թվականների քառամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2-Ա որոշման հավելված թիվ 1-ում.

16.04.2014 թվականի «Ավշարի գյուղապետարանի աշխատակազմի» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 07-Ն որոշման մեջ և հավելվածում.

30.06.2014 թվականի ՝

ա/«Ավշար համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշման հավելվածում.

բ/«բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և դրանց վերաբերյալ Ավշար համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 19-Ն որոշման հավելվածում

գ/«Ավշար համայնքի ղեկավարին կից , Ավշար համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման հավելվածում.

դ/ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ավշար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22-Ն որոշման հավելվածում.

29.12.2015 թվականի ՝

ա/ «գյուղապետարանի , գրադարանի, կուլտուրայի տան, Ավշարի բժշկական ամբուլատորիայի և մանկապարտեզի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների և գույքի հաշվառման մասին» թիվ 37 –Ա որոշման հավելվածներում .

բ/« գյուղապետարանի աշխատակազմի, մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկի , մանկապարտեզի հաստիքների թվաքանակի , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 40-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ ՝ «գյուղապետ», «գյուղապետարան» և « գյուղապետարանի» բառերը փոխարինել «Համայնքի ղեկավար», «համայնքապետարան» և «համայնքապետարանի» բառերով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ